


## ՆԱԽԱԳԱՅ ԱՍՏՏ ՍՈՒՐԻՈՅ ԱՆԿԱՍՏՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՇՆՈՐՀԱԽՐԱԳԲԵՐ ՄՏԱՃԱԲ

Նախագահ Ասատ Սուրիոյ անկախութեան տօնին առիթով շնորհաւորագրեր ստացաւ արաբական եւ այլ երկիրներու ղեկավարներէ, որոնց կարգին Յայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանն:

Հայաստանի վարչարարութիւն յղած շնորհաւորագրին մէջ կը յիշուէր. «Սուրիոյ Հանրապետութեան անկախութեան առիթով մեր ջերմագին շնորհաւորանքը կը յղենք Սուրիոյ բարեկամ ժողովուրդին եւ Ձերոյ վստահութեան: Հայաստանի Հանրապետութիւնը բարձր կը գնահատէ Սուրիոյ հետ բարեկամական յարաբերութիւնը, երկու երկիրներու փոխադարձ վստահութիւնն ու յարգանքը, որոնք գործակցութեան զարգացման ամուր հիմք կը հանդիսանան: Այս առիթով ձեզի կը մաղթեմ քաջամոռոյցութիւն, երջանկութիւն, իսկ Սուրիոյ բարեկամ ժողովուրդին՝ խաղաղ եւ բարգաւաճ կեանք»:



## ՍՈՒՐԻՈՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՆԵՃՈՒԿ ԿԸ ԿԱՆԳՆԻ ԻՐԱՆԻՆ

Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը հաղորդագրութեամբ յայտնեց, որ Սուրիոյ Հանրապետութիւնը նեցուկ կը կանգնի Իրանին, շեշտելով, որ Իրան իրաւաւէտ թիրախներ հրթիռակոծելով պարզապէս իր իրաւունքները կը պաշտպանէ, որպէս պատասխան Դամասկոսի մէջ իրանեան ղեսպանատունը թիրախաւորած իրաւաւէտ հրթիռակոծումներուն: Նախարարութիւնը աւելցուց, որ Սուրիա խըստի կը դատապարտէ Սուրիոյ գերիշխանութեան դէմ իրաւաւէտ յարձակումները, յատկապէս Դամասկոսի եւ Հալէպի միջազգային օդակայաններու հրթիռակոծումները:



## ԻՐԱՆԻ ԴԵՄՊԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԻՇԽԱՆ ՏԱՐԱԾԵԻՆ ՀԱՍԱՐ ՄԵՐ ԿԱՐՄԻՐ ՓԻՇԵՐԸ ԶԵՆ ՓՈԽՈՒԻԾ»

Հայաստանի Հանրապետութեան մէջ Իրանի ղեսպան Մեհտի Սոպիանի մասին լրագրողներու հետ գրոյցի ընթացքին ըսաւ. «Մենք դէմ ենք շղթաւորման մէջ լարուածութեան հաւանական աճին, ատիկա կը վնասէ շրջանին, նաեւ Հայաստանին ու Ատրաքեյճանին. երկու կողմերուն կոչ կ'ուղղենք հանդարտութիւն, զըսպուածութիւն ցուցաբերելու եւ խաղաղութեան մասին երկխօսութիւնը շարունակելու»:



«Մենք կը գտնենք, որ լարուածութիւնը լուրագեցնելու կարեւորագոյն գործօններէն են երկխօսութիւնը եւ դիւանագիտութիւնը, ինչպէս նաեւ ազգային գերիշխանութեան յարգումն ու միջազգայնօրէն ճանչցուած սահմաններու անխախտելիութիւնը եւ միջազգային օրէնքներու յարգումը: Պատերազմը երբեք խնդիրները չէ լուծած, նոյնիսկ պատերազմները կը լուծուին երկխօսութեան եւ դիւանագիտութեան միջոցով», աւելցուց Սոպիանի:

Այն հարցումին, թէ որո՞ւնք են Իրանի կարմիր գիծերը Հայաստանի գերիշխան տարածքին համար, արդեօք անոնք փոխուա՞ծ են, ղեսպանը պատասխանեց.

«Ո՛չ, մեր կարմիր գիծերը չեն փոխուած, մեր երկրի ամենէն բարձրաստիճան ղեկավարը միջազգայնօրէն ճանչցուած սահմաններու փոփոխութեան դէմ արտայայտուած է, իբրեւ կարմիր գիծ, եւ կարելի չէ զայն անտեսել: Մենք կտրականապէս դէմ ենք որեւէ աշխարհաքաղաքական փոփոխութեան եւ միջազգայնօրէն ճանչցուած սահմաններու փոփոխութեան»:

Ան նշեց, որ Իրանի կարծիքով, եթէ սահմանին վրայ կան խնդիրներ, այդ խնդիրները պէտք է լուծուին երկխօսութեան, փոխադարձ ընկալման հիման վրայ, ինչպէս նաեւ երկիրներու գերիշխանութիւնն ու տարածքային ամբողջականութիւնը յարգելով:

## 40 ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐ ՄԱՍՆԱԿՅԵՃԱՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԵՄԻՆԱՐԻՆ (ՆՈՒՐՈՒԿԾ «ՄԱՐԴՈՒԺ»-Ի ՏԱՐՈՒԱՆ)

Սուրիոյ մայրաքաղաք Դամասկոսէն, Լաթաքիայէն, Զեսապէն եւ Հալէպէն երիտասարդներ ի մի բերած լրագրական սեմինարը առիթ հանդիսացաւ գիտելիքներու փոխանցման ու կարծիքներու փոխանակման:



Արդարեւ, Հիմնուելով ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին 2024-ը «Մարդու Պատրաստութեան Տարի» հռչակելու կոնկալին վրայ, «Գանձասար» շաբաթաթերթի խմբագրութեան եւ վարչութեան կազմակերպութեամբ, Ուրբաթ 12 Ապրիլ 2024-ին տեղի ունեցաւ երիտասարդ լրագրողներու միօրեայ սեմինար, Հալէպի Ս. Բառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ կից «Ն. Աղբալեան» սրահէն ներս:

Գարոյին Քիւրքեան  
 Շաբ.՝ 19 12 >

## «ՄԵՆՔ ՀԱՅԵՐԷՆ ԶԵՆՔ ՓԻՇԵՐ» ԹԱՏԵՐԳՈՒԹԵԱՐ ԵՆՈՅԹ ՈՒՆԵՃԱԲ ՀԱՍԱԶԳԱՅԻՆԻ ԲԵՍԱՊԻ «ՀԱՍՏՕՉԱՆՁԱՆԵԱՆ» ԹԱՏԵՐԱՍՈՒԿԸ

Հալէպահայ հանդիսատեսը առիթը ունեցաւ վայելելու Զեսապէն ժամանած «Համօ Օհանջանեան» Մասնաճիւղի թատերախումբին կատակերգական ներկայացումը, ծանօթանալու նոր դերակատարներու եւ ըմբռնչունելու հայկական մեր իրականութեան մէջ յռի երեւոյթներ ընկալող Սարուխանի երգիծական ոճը:

Արդարեւ, հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջ-



նորդ Գերշ. Տ. Մակար Ս. Արք. Ազգարեանի, կազմակերպութեամբ Համազգայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան, Կիրակի, 14 Ապրիլ 2024-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ սրահէն ներս տեղի ունեցաւ Զեսապէն ժամանած Համազգայինի «Համօ Օհանջանեան» մասնաճիւղի թատերախումբին Ալեքսանդր Սարուխանի «Մենք Հայերէն Զենք Գիտեր» կատակերգութեան ներկայացումը, բեմադրութեամբ Նայիրի Կարճկեան-Մելքոնեանի:

Ներկայացումը դիտելու եկած էին Առաջնորդ Սրբազան Հայրը, հոգեշնորհ հայր սուրբեր, արժանապատիւ քահանայ հայրը, պատուելին, Ազգ. վարչութեան, Պատկան Մարմնի, Համազգայինի եւ ՅՕՄ-ի Կեդր. վարչութեանց, հալէպահայ մշակութային, մարզական եւ բարեսիրական միու-

Քրիստ Գարամանեան  
 Շաբ.՝ 19 8 >

## Տեղական Լրագրող

### Խմբագրական

### ԻՐԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԸ

13 Ապրիլին Իրանը յարձակում կազմակերպեց Իսրայելի վրայ, նախապես տեղեակ պահելով այդ մասին: Սա բնական էր լայնածավալ պատերազմի չձեռնարկող ու պարզապես պատասխան սահմանափակ հարուած հասցնող Իրանի համար:

Իսրայելի յարձակումը Դամասկոսի մեջ Իրանական դեսպանատան վրայ կը կարծուեր, թե անպատասխան պիտի մնար, բայց ահա՛ այս անգամ Իրան ձեռնարկեց պատասխան քայլի, յստակ թիրախներ հարուածելով ու յայտարարելով, որ գործողութիւնը անարտած է ու պատասխանը տրուած:

Ի՞նչ էր Իրանի պատասխանը սակայն...

Իրան այս հարուածով նախ ցոյց տուաւ, որ իր շահերու վտանգի ենթարկումը անտես պիտի չանցնի այսուհետեւ, միւս կողմէ յուշեց, որ իր օգտագործած հրթիռները զինուորական իր կարողութիւններու առաւելագոյնը չեն, այլ պարզապէս պատասխան հարուածի մը կը համապատասխանեն: Այս կը պարզեր Իրանի յայտարարութիւնը հարուածէն ետք, երբ կը շեշտէր, թէ Իսրայելի գործողութիւններու շարունակման պարագային պատասխան հարուածը համապատասխան պիտի ըլլայ իր թիրախին: Իրան պարզեց, որ լարուածութեան սաստկացման պարագային կը վտանգուի ոչ միայն Իսրայելը, այլեւ ԱՄՆ-ի շահերը տարածաշրջանին մէջ: Միւս կողմէ արաբական կարգ մը երկիրներու օդային իրենց տարածքի փակումը կը նշէր այդ երկիրներու Իրանին դէմ որեւէ քայլի չընդառաջելու եւ շրջանը պատերազմական նոր բռնկումներէ զերծ պահելու տրամադրութիւնը:

Կազգայի յորձանուտէն դուրս չեկած Իսրայելի համար անխոհեմ քայլ էր Սուրիոյ մէջ Իրանի հիւպատոսութիւնը թիրախ դարձնելը, այնուամենայնիւ այդ քայլը ծառայեց Իրանի պատասխան հարուածներ հասցնելու պատրաստակամութեան պարզումին, ՄԱԿ-ի կանոնադրութեան յօդուածին մէջբերումով ու այդ հարուածին օրինականութեան հաստատումով: Այս օրերուն ո՛չ Իրան, ոչ ալ Միացեալ Նահանգներ պիտի ցանկան տարածաշրջանի լարուածութեան աշխարհագրութեան ընդլայնումը տեսնել, որովհետեւ գոյութիւն ունին՝ Ուքրանիոյ բաց մնացած հարցը, Պաղեստինի միացեալ ճակատը Իսրայելի դէմ, Միջին Արեւելքի եւ Հարաւային Կովկասի խառնաշփոթ վիճակները: Լարուածութեան տարածքի ընդլայնումով ոչ մէկ կողմ պիտի շահի:

Իրանի դէմ գործողութիւնները ընդլայնելու հաւանականութիւնը կրնայ վտանգել նաեւ Հարաւային Կովկասը ու Ատրոպէյճան օգտուելով այս պատմական առիթէն կրնայ փորձել «Չանգեզուրի Միջանցք»-ի իր երազը իրականացնել՝ օգտուելով Իսրայելի զինուորական ներկայութենէն, սակայն Իրան քանիցս յայտարարեց ու կը շարունակէ յայտարարել, որ իր սահմաններուն որեւէ լարուածութիւն ընդունելի չէ, իսկ տարածաշրջանի երկիրներու տարածքային ամբողջականութիւնը կարմիր գիծ է: Միւս կողմէ ո՛չ Իսրայել պիտի կարենայ զինել Ատրպէյճանը նախորդ տարիներուն նման, ոչ ալ Թուրքիան պիտի ցանկայ ուղղակի բախումներու մէջ մտնել Իրանի հետ:

Հայաստան հաւասարակշռուած քաղաքականութիւն վարելու եւ Իրանը թիրախ դարձնող գործողութիւններէն զերծ մնալու քաղաքականութեամբ ու իր զինուորական կարելիութիւններու լարումով կրնայ պաշտպանուիլ Ատրպէյճանի կանխատեսելի յարձակումներէն, իսկ Ատրպէյճանի յարձակման որեւէ ազդանշան այս անգամ Իրանի կողմէ անպատասխան պիտի չմնայ, որովհետեւ Իրանը թիրախ պիտի դարձնէ ուղղակիօրէն:

«Գ.»

-Սուրիոյ նախագահ, Պասս Կուսակցութեան ընդհանուր քարտուղար Պաշար ալ-Ասատ հանդիպում ունեցաւ Կուսակցութեան կեդրոնական ղեկավարութեան անդամներուն հետ, քննարկելով մօտերս գումարուելիք ընդլայնուած ժողովի օրակարգը:



Նախագահը ժողովականներուն հետ խորհրդակցեցաւ նաեւ յառաջիկայ ժողովին ընթացքին տեղի ունենալիք կեդրոնական ղեկավարութեան եւ յանձնախումբի անդամական ընտրութիւններուն շուրջ:

-Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատ իր օմանցի պաշտօնակից Պատըր պըն Համատ Պուսասիտիին հետ հեռաձայնային հաղորդակցութեամբ քննարկութիւն յայտնեց Օմանի ժողովուրդին եւ ղեկավարութեան՝ Օմանի Սուլթանութեան կարգ մը շրջաններու մէջ տեղի ունեցած շրիտեղի գործերուն առիթով: Ան յայտնեց, որ Սուրիա նեցուկ կը կանգնի Օմանի իր եղբայր ժողովուրդին այս աղետին յաղթահարման մէջ:



Իր կարգին Պուսասիտի բարձր գնահատեց Սուրիոյ զօրակցութիւնը, որ կ'արտայայտէ երկու երկիրներու ժողովուրդներուն եւ ղեկավարութիւններուն եղբայրական կապն ու փոխադարձ զօրակցութիւնը:

-ՄԱԿ-ի մէջ Սուրիոյ Հանրապետութեան մասյուն ներկայացուցիչ Քուսայ Տահիաք Իսրայելի եւ ամերիկեան վարչակազմին կը վերագրէ իսրայելեան յարձակումները եւ տարածաշրջանին մէջ տեղի ունեցած ռազմական սաստկացումները, որոնք կը խախտեն ապահովութիւնն ու խաղաղութիւնը:

Ան յայտնեց, թէ ժամանակը հասած է, որ արեւմուտքի պետութիւնները լուրջ քայլերու ձեռնարկեն Պաղեստինի ժողովուրդին դէմ իսրայելեան գրոհը դադարեցնելու եւ Սուրիոյ մէջ ամերիկեան ուժերուն ապօրինի ներկայութեան վերջ տալու համար:



Տահիաք աւելցուց. «Տարածաշրջանին մէջ տեղի ունեցած դէպքերը բնական հետեւանք են իսրայելեան կողմին իրագործած իրարայայտող յարձակումներուն եւ միջազգային օրէնքի խախտումներուն, ըլլան անոնք Սուրիոյ կամ այլ պետութիւններու դէմ, նկատի ունենալով, որ Իսրայել ամբողջական զօրակցութիւն կը ստանայ ԱՄՆ-էն՝ տարածաշրջանին մէջ իր ոճիրները կը սաստկացնէ առանց պատիժի ենթարկուելու»:

-Լիբանանի մէջ սուրիական դեսպանատունը ցաւ յայտնեց եւ խստիւ դատապարտեց նախօրօք լիբանանցի քաղաքացիի մը դէմ իրագործուած ոճիրն ու անոր հետեւանքները, որոնք կը հակասեն երկու երկիրներուն եղբայրական յարաբերութեան եւ կը վիրաւորեն լիբանանցի եւ սուրիացի քաղաքացիներուն արժանապատուութիւնը:



Դեսպանատունը իր նախանձախնդրութիւնը յայտնեց Սուրիոյ եւ Լիբանանի եղբայրական յարաբերութիւնը պահպանելու, աւելցնելով, որ ան, գործակցաբար լիբանանեան պատկան կողմերու հետ, կը հետեւի Լիբանանի մէջ սուրիացի քաղաքացիներու իրավիճակին:

-Սուրիոյ անկախութեան 78-ամեակին առիթով, Հայաստանի Հանրապետութեան մէջ Սուրիոյ դեսպանատունը իւրայատուկ համերգ մը կազմակերպեց Ա. Սպենդիարեանի անուան Օփերայի եւ Պալէի ազգային ակադեմիական թատրոնի հայկական սիմֆոնիկ նուագախումբին հետ գործակցաբար:



Համերգը ղեկավարեց Սուրիոյ սիմֆոնիկ նուագախումբի ղեկավար մայեսթրօ Միսաք Պաղպուտարեան: Համերգի ընթացքին մենակատարութեամբ հանդէս եկաւ ուտահար մայեսթրօ Ատնան Ֆաթիալլա:

Համերգը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 17 Ապրիլ 2024-ին, Երեւանի Ա. Սպենդիարեանի անուան Օփերայի եւ Պալէի ազգային ակադեմիական թատրոնին մէջ:

# Լուրեր Հայաշխարհին

## ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՉ ԿՈՒՂԷ ՄԵՐՉԱԽՈՐ ԱՐԵՒԵԼԵՒ ՄԷՋ ԱՌԱՋՆԱԶԵՐԹՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՉՆԵԼ ԵՐԿԽՍՈՒԹԵԱՆ



Միջին Արեւելքի մէջ լարուածութեան աճը լուրջ մտահոգութիւն կը յառաջացնէ, յայտարարած է Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութիւնը:

Պաշտօնական Երեւանը կոչ կ'ուղիէ առաջնահերթութիւն տալու Երկխօսութեան:

«Անհրաժեշտ է խուսափիլ հետագայ առճակատումէն», արձանագրուած է Արտաքին Գործոց Նախարարութեան «Էքս»-ի էջին վրայ կատարուած գրառումին մէջ:

### Այնպիսի Վայք Եւ Եռեւանոր Բնակիչներ



13 Ապրիլին ՀՀ Հայաստանի Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ իշխան Սաղաթելեան եւ Հայաստանի Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւորները Վայք եւ Եղեգնաձոր քաղաքներուն մէջ հանդիպում ունեցած են քաղաքացիներուն հետ, քննարկած են երկրին մէջ ստեղծուած իրավիճակը, լսած անոնց տեսակետները եւ պատասխանած զանոնք յուզող հարցումներուն:

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԵՐՉԱՆԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ՖՐԵՉՆՈՅԻ ՄԱՍԻՍ-ԱՐԱՐԱՏ ԳԵՐԵՉՄԱՆԱՏԱՆ ՀՐԿԻՉՈՒՄԸ

Ամերիկայի Հայ Դատի Արեւմտեան շրջանի յանձնախումբը (ANCA-WR) վրդոված է Ֆրեզնոյի Մասիս-Արարատ հայկական գերեզմանատան մէջ տեղի ունեցած հրկիզման համար: Ֆրեզնոյի գերեզմանատունը, որ հիմնադրուած է 1885-ին, ԱՄՆ-ի ամենահին հայկական գերեզմանոցն է եւ հայ հերոսներ ու հասարակական գործիչներ՝ Սողոմոն Թեւիլիբեան, Վիքտոր Մաղաքեան եւ Ուիլիլմ Սարոյեան իրենց վերջին հանգրուանը այս գերեզմանոցին մէջ գտած են:

Գերեզմանատան տնօրինութեան տուեալներով՝ ութ ծառ հրկիզուած է հրկիզողին կողմէ 13 Ապրիլ 2024-ին, յետմիջօրէի ժամը 3:00-ին: Դեպքը իր տեսակին մէջ վեցերորդն է 2024 թուականի սկիզբէն, որոնց հետեւանքով գերեզմանոցին մէջ տապալած է աւելի քան 19 ծառ, ինչ որ կը վկայէ, որ այս դեպքերը հայերու դէմ ատելութեան յանցագործութեան տարրեր կը պարունակեն: Հրկիզումը տեղի ունեցած է Հայոց Յեղասպանութեան ոգեկոչման արարողութենէն երեք շաբաթ առաջ, որուն ընթացքին դրօշի բարձրացման արարողութիւն տեղի կ'ունենայ Սողոմոն Թեւիլիբեանի յուշարձանին մօտ:

«Մասիսի հայկական գերեզմանատան վրայ այս սողկայի յարձակումները յստակօրէն ցոյց կու տան, որ հակահայկական տրամադրութիւնները անհասցէ սպառնալիք են հասարակական անվտանգութեան եւ յատկապէս Ֆրեզնոյի ամերիկահայ համայնքին», ըսած է Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբի Արեւմտեան շրջանի տնօրէններու խորհրդի նախագահ՝ Օշին Յարութիւնեան: «Տեղական իշխանութիւնները պետք է հետաքննեն 6 դեպքերը, որոնք տեղի ունեցած են 2024-ի սկիզբէն ի վեր, եւ երաշխաւորեն, որ յանցագործութիւններու այս շարանը բացայայտուի, յանցագործ(ները) պատասխանատուութեան ենթարկուին, եւ ամերիկահայ համայնքը փոխհատուցուի բոլոր վնասներուն համար»:



ANCA Western Region Condemns Arson Attacks at Ararat Armenian Cemetery and Demands Tangible Action from Policymakers and Law Enforcement

## ԵՐԻՇԷ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՄԻՋԵՒ ՀԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՆՇԱՆՆԵՐ ԴՆԵԼՈՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ՓՈՐՉԵՐԸ ԱՆԼՈՐՉ ԵՆ ԵՒ ԿԻՆԻԿԵԱՆ»

Միջազգային իրաւական հարցերով Հայաստանի ներկայացուցիչ Երիշէ Կիրակոսեան անլուրջ ու կիւնիկեան որակած է ատրպեյճանական կողմին այն քայլերը, որոնք կը փորձեն Արդարադատութեան միջազգային դատարանին մէջ «Հայաստանը ընդդէմ Ատրպեյճանի» գործով լսումներու ընթացքին հաւասարութեան նշան դնել Հայաստանի ու Ատրպեյճանի միջեւ:



«Արմենկիթսի»-ի հարդորմամբ՝ Արդարադատութեան Միջազգային դատարանին մէջ լսումներու ընթացքին իր ունեցած ելոյթին Երիշէ Կիրակոսեան յիշեցուցած է, որ 16 Սեպտեմբեր 2021-ին Հայաստան վարոյթ յարուցած է Ատրպեյճանի դէմ, քանի որ այդ պետութեան կողմէ ռասսայական խտրականութեան աղաղակող քաղաքականութիւն իրականացած է ազգութեամբ հայերուն նկատմամբ:

«Ատրպեյճանի երեխաներուն դպրոցական դասագիրքերուն մէջ կը տրուեն ատելի եւ սպանելի հայերը: Պետական լրատուամիջոցները ատելութեան խօսք կը տարածեն, պետական պաշտօնեաները կոչ կ'ուղղեն ի սպառ վերացնել հայերը: Ասիկա պետութեան կողմէ թոյլատրուած համատարած այլատիպացումն է», ընդօժեց Կիրակոսեան:

Ան ընդօժեց, որ ցեղային խտրականութեան այս երկարածամկետ պետական քաղաքականութիւնը իր գազաթնամակտիւն հասած է, երբ Ատրպեյճան նախարարական պատերազմ սանձազերծած է Լեռնային Ղարաբաղի բնիկ հայերուն դէմ, որուն յայտարարուած նպատակն էր վերացնել եւ վտարել հայերը իրենց հայրենիքէն:

Երիշէ Կիրակոսեան մէջբերում կատարեց Նաեւ Ատրպեյճանի նախագահ Ալիեւի՝ հետագային արտասանած խօսքերէն, որոնք մէջ վերջինս նշած էր, որ թշնամիի (հայերու) նկատմամբ ատելութիւնն է ատրպեյճանցիները յառաջ մղողը:

«44 օր շարունակ ատրպեյճանցի զինուորները կը սպանէին, կը խոշտանգէին բնիկ հայերը եւ հպարտօրէն կը նկարուէին իրենց գոհերուն առջեւ...», դատարանին յիշեցուցած է Կիրակոսեան՝ աւելցնելով, որ այս բռնութիւնը եւ ահաբեկումը Ատրպեյճանի կողմէ օգտագործուեցաւ ԼՂ-ի հայերը ցեղային գտման ենթարկելու եւ առնուազն 30 հազար հայեր իրենց հայրենիքէն վտարելու համար:

ՀՀ ներկայացուցիչը պարզաբանեց, որ այս բոլորէն ետք, Հայաստան պատասխան պահանջեց սոյն համաձայնագրին ներքոյ եւ դիմեց դատարան, որպէսզի վերջինս հրատապօրէն պաշտպանէ այն խոցելի բնիկ հայերը, որոնք տակաւին չէին սպանուած՝ չէին վտարուած իրենց հայրենիքէն:

Ապա աւելցուց. «Նոյնիսկ Արդարադատութեան Միջազգային դատարանը չկրցաւ կանգնեցնել Ատրպեյճանի այլատիպացութեան քարոզարշաւը, որուն արդիւնքով Նաեւ ցեղային գտում իրականացաւ»:

Երիշէ Կիրակոսեան յայտարարեց, որ Սեպտեմբեր 2023-ին Ատրպեյճան յարձակման նախաձեռնեց՝ հարիւր հազարաւոր հայեր ստիպելով հեռանալ իրենց հայրենիքէն: Ան յիշեցուց, որ մինչ այդ Ատրպեյճան արգելափակած էր Լաչինի միջանցքը, շրջափակած էր Լեռնային Ղարաբաղը՝ զրկելով ԼՂ-ի բնակչութիւնը կենսական անհրաժեշտութեան մատակարարումներէն: Կիրակոսեան յիշեցուց Նաեւ, որ Արդարադատութեան Միջազգային դատարանը Ատրպեյճանէն պահանջած էր բանալ Լաչինի միջանցքը, բայց Ատրպեյճան չկատարեց դատարանի որոշումը:

Ան դատարանին յիշեցուց, որ Ատրպեյճան կը ջնջէ Լեռնային Ղարաբաղի հայկական մշակութային ժառանգութիւնը՝ ընդօժելով, որ այս բոլոր հանգամանքները պատճառ հանդիսացան, որ Հայաստանը դիմէ դատարան:

Անդրադառնալով Ատրպեյճանի ներկայացուցիչին կողմէ նախօրէին ինչպէս այն յայտարարութիւններուն՝ որոնցմով վերջինս փորձած էր հաւասարութեան նշան դնել Ատրպեյճանի՝ Հայաստանի միջեւ՝ Կիրակոսեան անիկա անընդունելի համարեց՝ յայտարարելով, որ այդ փորձերը անլուրջ են եւ կիւնիկեան:

Ան աւելցնելով ըսաւ, որ Ատրպեյճանի համար դժուար է ապացոյցներ ներկայացնել դատարանին, քանի որ անոնք պարզապէս գոյութիւն չունին՝ այդ քայլերը անուանելով Ատրպեյճանի կողմէ հաւասարութիւն դնելու անյոյս փորձ:



«ԻՍՐԱՅԷԼ-ԱՏՐՊԷՅՃԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԻՄՆՈՒՄԸ ԵՆ ՆԱԻԹԻ, ԶԷՆՔԻ ԵՒ ՅԵՏԱԽՈՒԶՈՒԹԵԱՆ ՊԻՂԾ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ԿՐԱՅ»

Յարութ Սասունեան

Իսրայելական «Հաարեց» (Haaretz) թերթը 11 Ապրիլին հրապարակած է բացայայտող յօդուած մը Ատրպեյճանի եւ Իսրայելի միջեւ բարձր մակարդակի լայն կապերու մասին՝ «Ինչպէ՛ս Ատրպեյճանի հետ ռազմավարական յարաբերութիւնները դարձած են Լիպըրմէն-ներու ընտանիքին առեւտուրը» վերնագիրով: Յօդուածը գրած է հետաքննող լրագրող Կուր Մըկիտո:

Էիկտըր Լիպըրմէն Իսրայելի կառավարութեան բարձրաստիճան պաշտօնեայ էր, որ բազմիցս այցելած է Պաքու, աւելի շատ, քան որեւէ ուրիշ իսրայելցի քաղաքական գործիչ, ամէն անգամ հանդիպելով նախագահ Իլիամ Ալիեւի եւ ատրպեյճանցի այլ բարձրաստիճան պաշտօնեաներու հետ: Ան երկու անգամ վարած է Իսրայելի փոխ վարչապետի պաշտօն եւ յաջորդաբար դարձած՝ վեց տարբեր նախարարութիւններու նախարար: Իսրայելի ազգային ենթակառուցումաճընէրու, երթեւեկի, ռազմավարական գործերու, արտաքին գործերու (երկու անգամ), պաշտպանութեան եւ դրամական:



Լիպըրմէն իսրայելցի միակ պաշտօնեան չէր, որ այցելած է Ատրպեյճան: Պաքու այցելած են նաեւ Իսրայելի պաշտպանութեան նախարարներ Պենի Կանց եւ Եով Կալանթ, ինչպէս նաեւ վարչապետ Պենիամին Նեթանտահուն՝ 2016-ին եւ նախագահ Ալգէ Զերցնկ՝ 2023-ին:

Մըկիտո յայտարարած է, որ «Իսրայել-Ատրպեյճան յարաբերութիւնները հիմնուած են նաւթի, գէնքի եւ հետախուզութեան պիղծ երրորդութեան վրայ: Իսրայել նաւթ կը գնէ Ատրպեյճանէն (Իսրայելի հում նաւթի մօտաւորապէս կէսը հոնկէ կու գայ) եւ կը վաճառուի գինուորական յառաջադէմ արհեստագիտութիւն: Փոխարէնը, ըստ տեղեկութիւններու, Ատրպեյճան անոր հնարաւորութիւն կու տայ մուտք գործելու Իսրայելի թիւ մէկ հակառակորդին՝ Իրանի հետ իր ցամաքային եւ ծովային սահմանը»:

Ատրպեյճան յաղթեց 2020 եւ 2023-ի արցախեան պատերազմներուն՝ «շնորհիւ Իսրայելի կողմէ մատակարարուող խաղի կանոնները փոխող ոչ փոքրաթիւ սպառազինութեան, ներառեալ իսրայելեան Hermes եւ Harop անօդաչու թռչող սարքերը եւ միլիտար տոլարներով գնուած ժամանակակից այլ գէնքեր: Ատրպեյճան այդ անօդաչու սարքերէն քանի մը հատը գնած էր, երբ Լիպըրմէն պաշտպանութեան նախարարն էր»:

2012-ին Պաքու կատարած այցի ժամանակ, Լիպըրմէնի հարցուցած են Foreign Policy ամսագիրի յօդուածին մասին, ուր մէջբերուած է ԱՄՆ կառավարութեան բարձրաստիճան պաշտօնեային խօսքերը. «Իսրայելցիները գնած են օդակայան, եւ օդակայանը կը կոչուի Ատրպեյճան: Նշուած են նախկին քանի մը խորհրդային ռազմաօդային խարխիւներու անուններ, որոնք, ըստ ամսագիրի աղբիւրներուն, Իսրայելի տրամադրութեան տակ էին կամ կ'ըլլան՝ Իրանի վրայ օդանաւային հաւանական հարուածի պարագային: Լիպըրմէն այդ պատմութիւնը կոչած է «գիտաբեւեակայական», որ «ոչ մէկ կապ ունի իրականութեան հետ»: Այսուամենայնիւ, Լոնտոնի The Times-ը յայտնած է, որ «Իսրայելի լրտեսական գործակալութիւնը՝ Մոսատ, խարխիւ ունի Ատրպեյճանի մէջ»:

«Որեւէ չափանիշով Ատրպեյճան բռնապետութիւն է», որ 2023-ին Economist Intelligence Unit-ի կողմէ 167 երկիրներու մէջ վարած է 130-րդ տեղը: Իսրայելի քննստիչ չորս անդամներէն կազմուած պատուիրակութիւնը՝ Լիպըրմէնի գլխաւորութեամբ, մեկնած է Ատրպեյճան՝ իբրեւ թէ նախագահական ընտրութիւնները վերահսկելու նպատակով: Անոնք հերքած են ընտրութիւններու մէջ տեղի ունեցած խախտումներուն մասին հաղորդումները, որոնց շնորհիւ Ալիեւ յաղթած է մեծ՝ 85 տոկոսով: Անոնք կեղծօրէն Ատրպեյճանը բնութագրած են իբրեւ «միակ ժողովրդավարութիւնը Մերձավոր Արեւելքի մէջ»: Ալիեւի յաղթանակը Լիպըրմէն կոչած է «լաւ դաս մը որոշ ուժերու համար, որոնք անարդարացիօրէն կը քննադատեն Ատրպեյճանը»:

Երբ իսրայելաբնակ ռուս պլուկըր Ալեքսանտր Լափշին ձերբակալուեցաւ եւ բանտարկուեցաւ Բաքուի մէջ՝ Արցախ այցելած ըլլալուն համար, անոր ընտանիքը այդ օրերու պաշտպանութեան նախարար Լիպըրմէնէն խնդրեց՝ միջամտել, սակայն վերջինս ոչինչ

ըրաւ անոր օգնելու համար, նոյնիսկ երբ Լափշին յարձակման ենթարկուեցաւ բանտի ապահովութեան պաշտօնեաներու կողմէ, որոնք փորձած էին սպանել գայն: Լափշին կը կարծէ, որ ի վերջոյ ռուսերը օգնած են, ապահովելու համար իր ազատ արձակումը:

Մըկիտո յայտնած է, որ Լիպըրմէնի երկու որդիները՝ Ամոս եւ Զոպի, «գործնական խորունկ յարաբերութիւններ» ունին Ատրպեյճանի կառավարութեան հետ: «Կը պարզուի, որ Լիպըրմէն եղբայրները շատ ժամանակ կ'անցընեն Պաքուի մէջ, ուր անոնք կը համարուին միջնորդներ, որոնք գիտեն թէ ինչպէ՛ս պիտի բանան դռները, իշխանութեան առջեւ: Վերջին տարիներուն, Լիպըրմէնի որդիները իսրայելական շարք մը արհեստագիտական բարձր արտադրանք մատակարարած են Ատրպեյճանի կառավարութեան. համակարգչային յանցագործութեան արտադրանք, որ պատրաստուած է համակարգչային անվտանգութեան Candiru ընկերութեան կողմէ. տուեալներու մեծ համակարգ՝ համակարգչային անվտանգութեան մէկ այլ ընկերութեան՝ Rayzone-ի կողմէ տուրքերու հաւաքագրումը բարելաւելու համար եւ ջուրի աղագերծման արհեստագիտութիւններ՝ իսրայելական IDE ընկերութեան կողմէ: Միայն այս երեք ձեռնարկութիւններու միջնորդութեամբ կարելի միջնորդավճարները կրնան հասնիլ միլիոնաւոր տոլարներու: Աւելին, մինչեւ վերջերս Լիպըրմէն եղբայրները կը ներկայացնէին «ատրպեյճանական օդանաւային թռիչքները» (պետութեան կողմէ վերահսկուող ազգային օդանաւ փոխադրող) Իսրայելի մէջ»:

Իսրայելական քանի մը ընկերութիւններ, ինչպէս Pegasus եւ Candiru, լրտեսական ծրագիրներ ծախած են Ատրպեյճանի՝ վարչակարգի հակառակորդներուն հեռախօսները կտրտելու համար: Այսօր, 18 ատրպեյճանցի լրագրողներ բանտերն են: Candiru-ի վաճառքը միջնորդած են Լիպըրմէնի երկու որդիները՝ միջնորդավճարի դիմաց՝ «զննատուած հարիւր հազարաւոր տոլարներով»: Rayzone համակարգչային ընկերութեան հետ գործարքէն անոնք շահած են «Մօտաւորապէս 200 հազար տոլար միջնորդավճար», ըստ «TheMarker»-ի՝ հրապարակուած «Հաարեց»-ի կողմէ: Լիպըրմէնի գրասենեակը յայտարարած է, որ «ան ներգրաւուած չէ իր գաւակներուն առեւտուրներուն մէջ»:

Լիպըրմէնի գաւակները կը ներկայացնէին նաեւ IDE Technologies-ը, որ կը նախատեսէ Ատրպեյճանի մէջ կառուցել ջուրի աղագերծման մեծ գործարան: Ասիկա «նախագիծ մըն է, որուն արժէքը կրնայ հասնիլ հարիւր միլիոնաւոր տոլարներու, եւ Լիպըրմէն եղբայրներու համար միջնորդավճարը, հաւանաբար, բարձրանայ համապատասխանաբար», գրած է Մըկիտո:

Մըկիտո կը հետաքրքրուի. «Կը կարծե՞ք, որ երկու որդիները Ատրպեյճանի կառավարութեան հետ կը հասնէին նման նշանակալի կարգավիճակի, եթէ անոնց ընտանեկան կապերը չըլլային»: Մէջբերում կ'ըլլայ գործարարի մը խօսքերէն. «Կրնամ ըսել ատրպեյճանցիներու մասին, որ անոնք այն մարդիկն են, որ գիտեն ինչպէ՛ս շնորհակալութիւն յայտնել: Եթէ դուն լաւ բան ընես անոնց համար, եւ անոնք քեզ գնահատեն, անոնք գիտեն, թէ ինչպէ՛ս շնորհակալութիւն պետք է յայտնեն՝ թէ՛ խօսքով, թէ՛ գործով»:

Մըկիտո եզրակացուց. «Հաւանաբար իսրայելեան կառավարող շրջանակներու մէջ չկայ մէկը, որ վիճարկէ այն բազմաթիւ օգուտները, գործ Իսրայել կը ստանայ Ատրպեյճանի հետ իր նողկալի, բայց, թերեւս կենսական յարաբերութիւններէն: Բայց այս երկու յայտարարութիւններուն միջեւ հակասութիւն չկայ. նախագահ Իլիամ Ալիեւի բարոյապէս կասկածելի իշխանութեան հետ ջերմ յարաբերութիւնները կրնան ըլլալ Իսրայելի ազգային անվտանգութեան ռազմավարութեան եւ միեւնոյն ժամանակ նաեւ Լիպըրմէններու ընտանիքի առեւտուրի ռազմավարութեան մաս»:

Արեւելահայերէնի թարգմանեց՝ Ռուզաննա Աւագեան  
Արեւմտահայերէնի վերածեց՝ Սեդա Գրիգորեան

**ՊԱՅՄԱԿԻ ԿԱՐԻՔ**  
«Տիգրանեան» պարտեզը կարիքը ունի պահակի:  
Հետաքրքրուողները մանրամասնութեան համար  
կրնան դիմել հետեւեալ թիւին՝ 0944 653551:

## ՄԱՆՐԱՎԵՊԵՐ



Յակոբ Չոլաքեան

### 17.- Թակը որո՞ն գլխուն կը կոտրի

1908-ին Միուրթին եւ Յառաջդիմութիւն կուսակցութիւնը յեղաշրջում իրագործեց Օսմանեան կայսրութեան մէջ: Կը հնչէր «ագատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն» կարգախօսը: Թուրքերը կը բարձրաձայնէին, թէ հայերն են թուրքերուն սիրելի դրացիները: Ամէն տեղ ժողովրդային հանդիսութիւններ կը կազմակերպուէին:



Նոյնը՝ նաեւ Զեսապի մէջ: Զեսապ կը մտնէր թրքաբնակ Օրտուկի վարչական կազմին մէջ: Շրջանի կառավարիչը օրտուցիներու եւ շրջակայ թուրք ու թուրքմէն գիւղացիներու գլուխն անցած օգոստոսեան առաւօտ մը տաւուլ-գումնայով Զեսապ կը բարձրանայ, թուրքերուն սիրելի դրացիները շնորհաւորելու համար, մանաւանդ որ հայերուն համար քաղցր կը հնչէր արծազանգող կարգախօսը: Թուրքերը կը հասնին Խող՝ Զեսապի հրապարակը: Հայկական բոլոր գիւղերէն մարդիկ կը վազեն հանդիսութեան մասնակից ըլլալու համար: Թուրք ու հայ թմբկահարներն ու փողահարները միասին կը նուագեն, թակերուն ուժգին հարուածէն Կայծակ լեռը կը թնդայ, ու ցպիկներու թրթռացումէն դափնիի թանձր տերեւները կը սրսփան: Ոտքեր կը դոփեն, սիրտեր թունդ կ'ելլեն: Հայեր ու թուրքեր թեւանցուկ կը պարեն, կը գրկընդխառնուին:

Գարատուրանէն Այսիկ Մանճիկ պարուն (աղա) ալ կու գայ ու թոռան հետ պատի մը տակ կեցած կը դիտէ սա խելացնոր խանդավառութիւնը ու պահ մը թոռանը դառնալով կ'ըսէ.

- Ես լաւ հոտ չեմ առնէր այս խնճոյքէն: Վերջը բարի թող ըլլայ: Բայց ես գիտեմ, որ այս թմբուկի թակը մեկուն գլխուն պիտի կոտրի, բայց չեմ գիտեր, թէ որո՞ն գլուխը պիտի ըլլայ ատիկա:

1909-ին Ապրիլի 23-ին օրտուցիները մինչեւ Ճաշը Շուղուր ու Իտլէպ հասնող թուրք ու թուրքմէն գիւղերու խուժանը հաւաքած՝ կը ներխուժեն Զեսապի շրջան, կը կողոպտեն, կը սպանեն, ապա կրակի կու տան հայոց բոլոր գիւղերը:

Մանճիկ Այսիկ ծերունին Կիւնիկ լեռան իր թաքստոցէն կը դիտէ Գարատուրանի տուններուն հրկիզումը ու գլուխը ծեծելով կ'ըսէ.

- Այս անգամ ալ մե՛ր գլխուն կոտրեցին թմբուկին թակը:

### 18.- Գերադասն ու ստորադասը

Խորհրդային Միութենէն գրողներու, արուեստագետներու եւ գիտնականներու մեծ խումբ մը ժամանած էր Հայկէպ՝ հայեր, ռուսեր, ազերիներ, վրացիներ եւ... եւ...: Բազմազգ փառանգ մը: Խումբին ղեկավարն էր բանաստեղծ Գեորգ Էմինը, փոխ-ղեկավարը՝ ռուս բանաստեղծ մը. անունը չեմ յիշեր: Ժողովուրդին հետ հանդիպում կազմակերպուած էր Ահարոնեան սրահին մէջ: Սրահը բերնէ բերան լեցուն էր, անշուշտ, միայն հայերով:

Գեորգ Էմին բեմ մտաւ ձախ դռնէն ու ներս հրաւիրեց ռուս բանաստեղծը, աջ դռնէն: Երկուքը հատ-հատ քայլերով մօտեցան իրարու, որքան մօտեցան Գեորգ Էմին կարծես այնքան կարճացաւ, իսկ ռուսը աւելի երկնցաւ: Գեորգ Էմինի խօսքով ընթացող բեմադրութիւնը ցոյց կու տար, որ ինքը կարճահասակ է, հայը պզտիկ ազգ է, բայց ահա այս մեծ խումբին ղեկավարն է, գերադասը, իսկ ռուս մարդը բարձրահասակ է, ռուս ազգը մեծ է, բայց ահա այստեղ՝ ստորադաս է: Երբ բեմին մէջտեղ հասան իրարու՝ Գեորգ Էմին քիթը վեր տնկած մնաց, իսկ ռուսը, գլուխը կախ, ոտքերուն առջեւ՝ իր գերադասը: Ձեւի եւ բովանդակութեան այս հակադրութիւնը ցընցեց ամբողջ սրահը ու բոլորը յոտնկայս ծափահարեցին հա ծափահարեցին...

Մենք որքան սիրած ենք ոչ թէ խաբուիլ ուրիշներէ, այլ մենք զմեզ խաբել մեր իսկ յօրինած կեղծիքներով:

Մենք քիչ ենք, սակայն...

## Թուրքիոյ նուրջ

### ԹՈՒՐԷՒՅՈՒՄՆ-Ի ՕՂԱՅԻՆ ՈՒՇԵՐԸ ԶՕՐԱՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՐԱՎՈՐՇԱԾ ԵՆ

15-17 Ապրիլին Թուրքիոյ եւ ԱՄՆ-ի օդային ուժերը միաստեղ գորավարժութիւններ կատարած են: Այդ մասին յայտնած է Թուրքիոյ Պաշտպանութեան Նախարարութիւնը:

Զօրավարժութիւնները ընթացած են Թուրքիոյ տարածքին: Օգտագործուած են F-16 կործանիչներ:


Յայտարարութեան մէջ նշուած է, որ գորավարժութիւնները առնչութիւն չունին վերջին օրերուն տարածաշրջանին մէջ ստեղծուած լարուածութեան հետ:

Կործանիչները պատկանած են ԱՄՆ-ի զինեալ ուժերուն:



### ԹՈՒՐԷՒՅԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԿԱԶՄԱԾ Է 124.000 ՏՈՒՐ 2024-Ի ԱՌԱՅԻՆ ԵՌԱՄՍԵԱԿԻՆ

Թուրքիոյ Առեւտուրի Նախարարութիւնը եւ Արտահանողներու Խորհուրդը գեկոյց հրապարակած են 2024-ի առաջին եռամսեակին կատարուած



արտահանման ծաւալներու մասին: Արձանագրուած է, որ այս տարուան առաջին եռամսեակին Թուրքիոյ արտահանման ծաւալները ընդհանուր առմամբ կազմած են 63,7 մլրդ. տոլար:

Անդրադառնալով սահմանակից դրացի երկիրներ կատարած արտահանման ծաւալներուն՝ տեղեկագիրը կը պարզէ, որ 2024-ի Յունուարէն մինչեւ Մարտ Թուրքիա կատարած է 5 մլրդ. 948 մլն. տոլարի արտահանում:

Դրացի երկիրներու կարգին ամենաշատ արտահանումը կատարուած է Իրաք եւ Երպիլ (2 մլրդ. 731 մլն. 317 հազար տոլար), իսկ ամենաքիչ արտահանումը կատարուած է Հայաստան՝ 124.000 տոլար:

## ՊԱՇՏՕՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ

ՍՕ Խաչի Ազգ. Պատասպարանը կարիքը ունի միջին տարիքի պաշտօնեայի՝ գիշերապահուիլի:

Մանրամասնութեան համար ներկայանալ Ազգ. Պատրասպարան, կամ հեռաձայնել հետեւեալ թիւերուն՝

4442022 - 0945472619 - 0945427598:

www.kantsasar.com  
www.kantsasar.com  
www.kantsasar.com



## ԱՇԽԱՏԱԿԱՆ ՀԱՄԵՐԳՆՈՒԻՐՈՒՄԸ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԿԱՊԵՏԻ ԾՆՆԻՔԱՆ 155-ԱՄԵԱԿԻՆ

Հովանավորությամբ՝ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Արք. Ազգարեանի, Շաբաթ, 13 Ապրիլ 2024-ին, յետմիջօրէի ժամը 5:00-ին, Համազգայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական միաւորի վարչութեան կազմակերպութեամբ տեղի ունեցաւ աշակերտական համերգ, նուիրուած Կոմիտաս վարդապետի ծննդեան 155-ամեակին, Ա. Մանուկեան Ժ. Տան «Լեւոն Շանթ» սրահէն ներս:



Համերգին ներկայ գտնուեցան Առաջնորդ Սրբազան Հայրը, Առաջնորդի Օգնական Հոգ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեան, Ազգ. Վարչութեան անդամ Արմեն Գասպարեան, Պատկան մարմնի անդամ Ներսէս Պարսումեան, Համազգայինի Կեդրոնական Վարչութեան անդամ Կարո Մանճիկեան, Համազգայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան ատենապետ Ռաֆֆի Սիլվահեան, Շրջ. Վարչութեան անդամներ, հրաւիրեալներ եւ աշակերտներուն ծնողները:

Համազգայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական միաւորի վարչութեան ատենապետ Շողեր Մուշեղեան-Հայրապետեան բացման խօսք արտասանեց, յայտնելով, որ Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչումին նուիրուած ամսուան մէջ, այս համերգը կազմակերպուեցաւ՝ յիշելու եւ մեծարելու հայ երաժշտութեան պատմութեան ամենէն պայծառ եւ լուսաւոր դէմքերէն Կոմիտաս Վարդապետը, իր ծննդեան 155-ամեակին առիթով: Ան յայտնեց, թէ Կոմիտաս վարդապետ հայու հոգին երգով եւ երաժշտութեամբ շնչաւորեց, հայկական երաժշտութեան ազգային դիմագիծը պահեց եւ զայն ողջ աշխարհին ծանօթացուց: Մեծանուն երգահանն ու երաժշտագետը 1915-ին, հայ մտաւորականներուն հետ քցուող եկեղծակերտ եւ դարձաւ հայ ժողովուրդի տառապանքին ակնաւորը:

Համերգին հանդիսավարն էր երաժշտական տնօրէնուհի Տալիտա Միլանսեան-Թովմասեան, որ մերթ ընդ մերթ Կոմիտասի ստեղծագործութիւններէն զեղեցիկ տողեր մեքերեց:

Մեծագործութիւններէն զեղեցիկ տողեր մեքերեց:

Աշակերտները երաժշտական գանազան գործիքներով զեղեցկօրէն ներկայացուցին Կոմիտասի ստեղծագործութիւններէն ընտրակի մը: Սկսնակ եւ առաջին դասարաններու աշակերտները, երգընթերցման (solfeccio)-ի իրենց ուսուցչուհիին՝ Անի Պողիկեանի ղեկավարութեամբ երգեցին «Կաքաւիկ»-ը, ֆլիւթի եւ դաշնամուրի աշակերտներու նուագի ընկերակցութեամբ:

Ապա, երաժշտանոցի լարային անսամբլը մեկնաբանեց «Հաբըրբան» եւ «Ալայուլուս» երգերը, ղեկավարութեամբ Լուսիա Պանտաքի: Աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը փոխանցեց իր սրտի խօսքը:

Ան ողջունեց Համազգայինի Կեդրոնական Վարչութեան անդամին ներկայութիւնը եւ իր հարազատ ու անկեղծ զգացումները փոխանցելով հաստատեց, թէ լուսապետ պատրաստուած համերգը մեր ներաշխարհը նուիրութեամբ եւ յոյսով լեցուց, երբ մեր ժողովուրդի գանազան տարիքի գաւաթները ժրպտուամբ, եռանդուն, խանդավառ եւ երաժշտութեան սիրով լեցուն իրենց նուագով հայու հոգին փոխանցեցին մեզի: «Այսօր մեր փոքր, պատանի եւ երիտասարդ ուժը կու գայ ապացուցելու, թէ ինչքան ալ կեանքի պայմանները ծանր կերպով փորձեն ճշդել ու սեղմել մեզ՝ չեն կրնար ընկճել հայու հոգին»:

Ան յայտնեց, թէ աշակերտները այսօր Կոմիտասի ստեղծագործութիւններուն նուիրուած համերգով մեզի շատ լուրջ դաս մը տուին, որն է որպէս ծնողներ եւ պատասխանատուներ, ի գին ամեն զոհողութեան նախանձանկիւր ըլլալ մեզի փոխանցուած արժէքներն ու գանձերը անաղարտ պահելու:

Սրբազան Հայրը շնորհաւորեց Համազգայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական միաւորի վարչութիւնը, տնօրէնութիւնը, ուսուցչական կազմը, ծնողները եւ ելոյթ ունեցող աշակերտները, մաղթելով, որ այսպիսի համերգներ ամսական դրութեամբ կազմակերպուին:

### «ՄԵՆԵ ՀԱՅԵՐԷՆ ԶԵՆԵ...»

Մկրտչի 1, 2

Թիւններու ներկայացուցիչներ եւ խումբներու հանդիսատեսներ:

Բեմը կը ներկայացնէր հայկական օջախ մը: Տան ճակտին կախուած էր Ս. Մեսրոպ Մաշտոցի հայ գիրերու գիւտին յայտնաբերման



անջողող պատկերը: Հանդիսատեսը հետաքրքրութեամբ կը սպասէր ներկայացումին:

Սուրիոյ եւ Հայաստանի գոյգ քայլերգներու ունկնդրութենէն ետք,



ներկաները մէկ վայրկեան յոտընկայս յարգեցին յիշատակը մեր բոլոր նահատակներուն:


Համազգայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան ատենապետուհին յայտարարեց ելոյթին սկիզբը:

Քե ս ա պ հ ա յ ա լ ա ն ի բոյրն ու շունչը իրենց հետ բերած տարբեր տարիքի համազգայնական դերակատարներ ներկայացուցին սփիւռքահայ հանրահոգեկերպի զգացումները փոխանցելով հաստատեց, թէ լուսապետ պատրաստուած համերգը մեր ներաշխարհը նուիրութեամբ եւ յոյսով լեցուց, երբ մեր ժողովուրդի գանազան տարիքի գաւաթները ժրպտուամբ, եռանդուն, խանդավառ եւ երաժշտութեան սիրով լեցուն իրենց նուագով հայու հոգին փոխանցեցին մեզի: «Այսօր մեր փոքր, պատանի եւ երիտասարդ ուժը կու գայ ապացուցելու, թէ ինչքան ալ կեանքի պայմանները ծանր կերպով փորձեն ճշդել ու սեղմել մեզ՝ չեն կրնար ընկճել հայու հոգին»:

Կատակերգութիւնը՝ «Մենք Հայերէն Զենք Գիտեր» կատակերգութիւնը՝ ներկայ տագնապներուն անջելով զայն:

Կատակերգութիւնը եւ ծիծաղաշարժ էր, եւ դաստիարակիչ:

Նիւթը կեդրոնացած էր այնպիսի



սի կերպարներու վրայ, որոնք արհամարհելով ազգային պատկանելիութիւնը, օտարամոլութենէ կուրացած կը թերագնահատէին հայկականը եւ առանց հասկնալու կ'իրացնէին օտար բարքեր, նոյնիսկ անտեսելով օտարներու թերութիւնները:

Անոնք, սակայն, ներկայացման վերջաւորութեան անդադառնալով իրենց սխալ մտածողութեան՝ պիտի վերադառնային իրենց ազգային արմատներուն ու սորվէին հայոց կյանքը իրենց երեխաներուն իսկ

դիմելով: Մէկ ու կէս ժամ տեսողութեամբ, երկու արարներով ներկայացուած թատերգութիւնը օտարին ծանօթանալով մէկտեղ հայկական չորանալու, զայն արժեւորելու պատգամ կը փոխանցէր:

Հալեպահայ հանդիսատեսը ծափողջոյններով գնահատեց տարուած աշխատանքը:

Ներկայացումէն ետք, Համազգայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան անդամ Մարինա Զիլ Աբօշեան-Պողիկեան խօսք արձեւելով շնորհակալութիւն յայտնեց Զեսայի հոգեւոր տեսուչ հոգեշնորհ Տ. Եսայի Աբեղայ Եօրտեքեանին, Համազգայինի «Համօ Օհանջանեան» Մասնաճիւղի թատերախումբին եւ բեմադրիչ Նայիրի Կարճիկեան-Մելքոնեանին, անոնց անձնուէր աշխատանքին եւ հաճելի ներկայացումին համար: Ապա բեմ հրաւիրեց Բերիոյ Հայոց

Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Ս. Արք. Ազգարեանը եւ Համազգայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան ատենապետ Ռաֆֆի Սիլվահեանը՝ յուշանուէրով պատուելու թատերախումբի բեմադրիչ Նայիրի Կարճիկեան-Մելքոնեանը:



Կատակերգութիւնը՝ «Մենք Հայերէն Զենք Գիտեր» կատակերգութիւնը՝ ներկայ տագնապներուն անջելով զայն:

Կատակերգութիւնը եւ ծիծաղաշարժ էր, եւ դաստիարակիչ:

Նիւթը կեդրոնացած էր այնպիսի

սի կերպարներու վրայ, որոնք արհամարհելով ազգային պատկանելիութիւնը, օտարամոլութենէ կուրացած կը թերագնահատէին հայկականը եւ առանց հասկնալու կ'իրացնէին օտար բարքեր, նոյնիսկ անտեսելով օտարներու թերութիւնները:

Անոնք, սակայն, ներկայացման վերջաւորութեան անդադառնալով իրենց սխալ մտածողութեան՝ պիտի վերադառնային իրենց ազգային արմատներուն ու սորվէին հայոց կյանքը իրենց երեխաներուն իսկ

Թատերգութիւնը վերջ գտաւ «Պահպանիչ» արօթքով:





## ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



### Խոյ

Գործնական մտածելակերպ ունիք այդ պատճառով ալ մեծ յաջողություններ պիտի արձանագրեք: Պատրաստ եղէ՛ք:



### Ցուլ

Չափազանց հաւատարիմ եք ձեր ընկերներուն: Յամառութեամբ բարձունքներ պիտի նուաճեք:



### Երկուորեակ

Անընդհատ նորություններով հետաքրքրուած եք: Ձեր սիրալիք բնակչութեամբ մարդոց սրտերը պիտի գրաւեք:



### Խեցգետին

Ձեր գագացումները յաճախ կ'իշխեն ձեր մտքերուն վրայ: Պատրաստ եղէ՛ք խեղճ մարդոց օգնութեան ձեռք երկարելու:



### Առիւծ

Ինքնավստահ ու վեհանձն եք: Արուեստի բոլոր բնագաւառներէն ներս աչքառու դիրքեր պիտի գրաւեք:



### Կոյս

Գիտություններու սիրահար եք, սակայն յոռետեսությունը ձեր թռիչքը պիտի խանգարէ: Լաւատեսութեամբ վարուեցէ՛ք:



### Կշիռք

Ներդաշնակութեան եւ արդարութեան յաւերժ ձգտում ունիք: Սակայն ձեր նպատակները իրագործելու համար համբերութեան կարիքը ունիք:



### Կարիճ

Չափազանց հետաքրքիր բնակչութիւն մը ունիք: Մեկ կողմէն ատելություն եւ ոխակալություն կը ցուցաբերեք, իսկ միւս կողմէն բարձր իտելալի գաղափարներով կ'առաջնորդուիք:



### Աղեղնաւոր

Պատահարները պիտի օգնեն ձեզ, որ երջանիկ ընտանիք մը կազմեք: Ձեր բարեսիրտ խառնուածքով պիտի գերեք ձեր շուրջիները:



### Այծեղջիւր

Անհրաժեշտ է, որ հոգ տանիք ձեր արտաքին երեւոյթին: Կեանքի ուղին խղճընդոտներով լի է, սակայն շուտով պիտի մոռնաք զանոնք:



### Ջրհոս

Ձեր ինքնուրոյն ճաշակն ու մտածելակերպը ունիք: Հաւատարիմ ու մարդասեր եք: Պիտի գնահատուիք:



### Ձուկ

Երազկոտ մարդիկ եք, սակայն հոգեկան լաւ յատկություններ ունիք: Այս շաբաթ որոշակի փոփոխություններ պիտի ունենաք:



## ԻՆՉ ԴԵՐ ՈՒՆԻՆ ԲՈՅՍԵՐԸ, ԾԱՌԵՐՆ ՈՒ ԲՆՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ

Որոշ բոյսեր, բացի օդը մաքրելու իրենց յատկութենէն, ունին նաեւ տան կենսուժը բարելաւելու ուշագրաւ յատկութիւն: Գոյութիւն ունին բնակարանային յատուկ բոյսեր, որոնք կրնան օգնել տան մէջ հանդարտ մթնոլորտ յառաջացնելու: Շատ մը հիւանդութիւններու յառաջացման հիմնական պատճառը օդի ապականումը կրնայ ըլլալ, եւ եթէ մարդիկ կարելիութիւն չունին որոշ մոլորակին օդը մաքրելու, առնուազն կրնան իրենց բնակարաններուն օդը մաքուր պահել՝ բոյսերով հ ա Ր Ս Տ Ա Գ Ն Ե Լ Ո Վ Գ Ա Ն Ո Ն Ե Կ:



Կենդանի էակներուն, այդ կարգին մարդուն գոյութիւնը անկարելի կը դառնար առանց բոյսերուն: Ահա թէ ինչո՞ւ բոյսերը առանձնայատուկ դեր ունին երկրագունդին վրայ: Բոլոր օրկանիզմներէն միայն բոյսերն ու որոշ մանրէներ ընդունակ են կլանելու արեւային ջերմութիւնը, որուն շնորհիւ օդը կը մաքրեն ածխաթթուներէն եւ գայնթթուներէն: Բոյսերը, բացի որպէս մտնող եւ բնակարաններու կամ այլ իրեր շինելու մէջ որպէս հիմք ծառայելէ, կ'օգտագործուին իրենց պարունակող բուսական նիւթերուն շնորհիւ:

Բոյսերը եւ բոլոր կենդանի օրկանիզմները, ներառեալ մարդը, բնութեան մասնիկներ են: Նաեւ բժշկութեան մէջ՝ իրենց պարունակող բուսական նիւթերուն շնորհիւ:

## ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԲՈՅՍԵՐՈՒՆ ԽՆԱՄՔԸ



Մասնագետներուն համաձայն, առողջ բնակարանային բոյսեր ունենալու համար անհրաժեշտ է յաճախ զանոնք ջրել խաշուած բանջարեղէնի, բրինձի կամ հաւկիթի ջուրով: Այդ ջուրը հարուստ է հանքային նիւթերով եւ կենսասնութեամբ, որոնք դրական ազդեցութիւն կ'ունենան բոյսի աճման ընթացքին վրայ: Բայց բոյսերը ջրելը եւ մշակելը մեքենական աշխատանք պէտք չէ դարձնել եւ իւրաքանչիւրին պէտք է առանձնայատուկ մօտեցում ցուցաբերել: Օրինակ, Ալովերան դնել լայն թաղարի մէջ, որպէսզի կարելի ըլլայ միայն հողը ջրել, քանի որ բոյսին շատ ջուր պէտք չէ հասնի: Գարեջուրին մէջ ջուր դնել:

Եթէ բնակարանային ծաղիկի տերեւներուն հիմնական մասերը դեղնած են, կը նշանակէ, որ արմատներուն մօտ առատ ջուր հաւաքուած է: Յօդուի երկայնքով դեղնած տերեւները կը վկայեն բարձր խոնաւութեան մասին: Եթէ բոյսի մը տերեւները կծկուած են, թոմած, կախ դարձած եւ չեն ուղղուած լոյսին, ուրեմն օդափոխութիւնը բնական չէ, արմատները դժուարութեամբ կը շնչեն: Ուստի պէտք է խառնել հողը, որպէսզի հողի մակերեսին յառաջացած սպիտակ կեղեւը բոյսին շնչառութիւնը չխանգարէ: Եթէ ծաղիկին տերեւները դեպի վար կը թեքին, ուրեմն ջրել է պէտք, իսկ եթէ ծաղիկին տերեւներուն եզրերը կը չորանան ու կը փշրուին, ուրեմն անհրաժեշտ է ծաղիկին մօտ տափակ ամառանով ջուր դնել:

Եթէ բոյսին տերեւներուն վրայ անգոյն բիծեր յայտնուած են, տերեւները կորսնցուցած են իրենց բնական գոյնը եւ կը թափին, ուրեմն սենեակին օդը շատ չոր է:

Ծաղիկները ջրելու կարիքը կայ թէ ոչ կարելի է իմանալ սրածայր փայտիկով: Փայտիկը խրել մինչեւ թաղարին յատակը: Եթէ հանելէն ետք չոր ըլլայ, վրան չերեւին հողի կտորներ, ուրեմն պէտք է ջրել: Ծաղիկները ջրելու պահուն, ջուրի շիթերը վերէն դեպի թաղարին եզրերը ուղղել, որպէսզի ցողունն ու արմատը չնեխին:

Բոյսերը պէտք է ջրել սենեակի ջերմաստիճանը ունեցող ջուրով, որուն լաւ կ'ըլլայ անելցնել քանի մը կաթիլ քացախ կամ կիտրոնի հիւթ: Բոյսերուն տերեւները անհրաժեշտ է երկու կողմէն լուալ հանքային ջուրով: Նախընտրելի է ծաղիկները աճեցնել փայտեայ թաղարներուն մէջ: Պարբերաբար խառնել թաղարի հողին վերի շերտը: Անհրաժեշտութեան պարագային հողին անելցնել մաքուր աւազ կամ սոճիի մանրուած տերեւ: Պայծառ օրերուն ծաղկող բոյսերը հանել պատշաճ, անոնք յաւելեալ օդ եւ լոյս ստանալով, անելի արագ եւ առողջ կ'աճին: Եթէ հիւրասենեակին մէջ յաճախ կը ծխեք, պէտք է 5-8 կանաչ բոյս դնել, որպէսզի ծխախոտի ծուխէն ձեր բազմաթիւ օդը մաքուր պահուի: Այս պարագային պէտք է անելի յաճախակիօրէն խառնել հողը, որպէսզի թաղարին երեսը յառաջացած բորբոսագոյն հողը արգելք չըլլայ բոյսերու բնական աճին:



## ՏԵՂԱԿԱՆ

### ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

- ՅՄԸՄ-ի պասքեթի տղոց խումբին պարգևատրումը՝ Սուրիոյ պասքեթի Կոնֆեդերացիայի կողմից և դասակարգ բարձրանալուն առիթով:

Պարգևատրումը տեղի ունեցավ կազմակերպությամբ ՅՄԸՄ-ի Հավելյա Մասնաճիւղի Վարչութեան, հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մակար Սրբ. Արք. Աշգարեանի, Շաբաթ, 13 Ապրիլ 2024-ին, Երեկոյեան ժամը 8:00-ին, ՅՄԸՄ-ի մարզադաշտէն ներս:



Սրբազան հօր կողքին ներկայ էին թեմի Յարաբերական Մարմնի ներկայացուցիչ Վրեժ Եագուպեան, ՅՄԸՄ-ի Կեդր. Վարչութեան ներկայացուցիչ Անտոն Տերվիշեան, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան Է. Ազգ. Վարչութեան աստեճակետ Ժիրայր Ռիստեան, ՅՄԸՄ-ի Շրջ. Վարչութեան, Տեղական Վարչութեան անդամներ, միութիւններու ներկայացուցիչներ եւ ՅՄԸՄ-ի մարզիկներ:

## ՀԱՅԿԱԿԱՆ

### ՄԱՐԶԱԿԱՆ ՆԵԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՊԱՍՔԵԹԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՒՄԵՐՈՒՆ ՄԵՋ

Հայաստանի Պասքեթի Դաշնութեան դիմատետրի էջը կը հաղորդէ, որ Հայաստանի պասքեթի խումբերուն մէջ տեղի ունեցած են մարզական սոր կշանակումներ:

2024-ի ամռան տեղի ունենալիք Եւրոպայի Գ. մասի առաջնութեան մէջ Հայաստանի աղջկանց միւլէ 16 տարեկաններու հաւաքականը կը գլխաւորէ Ալպերթ Յարութիւնեան:



Յարութիւնեանի գլխաւորութեամբ «Հատիս» դարձած է Հայաստանի աղջկանց առաջնութեան 2023/2024 մրցաշրջանի փոխախոյն:

Աղջկանց միւլէ 16 տարեկաններու հաւաքականը ընդգրկուած է Ա. Ենթախումբին մէջ, ուր ան կը մրցի Վրաստանի, Ատրպէյճանի եւ Կիպրոսի հաւաքականներուն հետ: Հանդիպումները տեղի պիտի ունենան 9-14 Յուլիս 2024 ճիպրալթարի մէջ:

Հայաստանի աղջկանց միւլէ 18 տարեկաններու հաւաքականի գլխաւոր մարզիչի պաշտօնին կշանակուած է Հայաստանի հաւաքականի նախկին խաղցող Արտիմ Թաւակալեան:

Անոր գլխաւորութեամբ «Ֆրքսիս» նուաճած է Հայաստանի աղջկանց 2023/24 մրցաշրջանի Կոնֆեդերացիայի տիտղոսը:

Աղջկանց միւլէ 18 տարեկաններու հաւաքականը ընդգրկուած է Գ. մասի Բ. Ենթախումբին մէջ, ուր կը մրցի Ալպանիոյ, Վրաստանի եւ Ատրպէյճանի խումբերուն հետ: Հանդիպումները տեղի պիտի ունենան 23-28 Յուլիսին Բոստօլլի Պրիշթինա քաղաքը:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

### ՄԱՀԱՅԱԾ Ե ՖՈՒԹԳՈՒԼԻ ԱԾԽԱՐԳԻ ԱԽՈՅԵԱՆ ՊԵՂՆԹ ԶՐԲՑՆՊԱՅՆԸ

Գերմանիոյ ֆութբոլի միութեան կայքը կը գուծէ մահը Գերմանիոյ նախկին Դաշնային Հանրապետութեան հաւաքականի եւ Ֆրանսֆուրթի «Այնտրախտ»-ի նախկին յարձակող, աշխարհի ախոյեան 78-ամեայ Պեղնթ Զըրցնայայնի:



### ԽԱԶԲԱՌ (ՄՆ 484)

Պատրաստեց՝ Մարինա Զիւլբոզեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1									■			
2				■		■					■	
3							■					
4			■									
5		■			■				■			
6								■				
7	■		■									■
8		■		■		■						
9									■			
10					■							
11									■			
12					■		■					

### Հորիզոնական

- 1- Սիրտի զարկ: Գագանի բոյ:
- 2- Արական անուն: Հինգշաբթի:
- 3- Տիտղոս: Ալ:
- 4- Հակառակ՝ 5002: Հակառակ՝ քաջ: Հակառակ՝ հայկական մականուններու վերջավանկը:
- 5- Շաղկապ: Հակառակ՝ փոքրացնող մասնիկ: Յաճախեց:
- 6- Կարմիր մագոլ: Նետ:
- 7- Զնանալ:
- 8- Դրամ:
- 9- Մշուշ: 101:
- 10- Բայական լծորդութիւն: Ձայնակիշ: Երկրաչափական ձեւ մը:
- 11- Հետեւեալ խօսքին հեղինակը. «Ազգին ծառայել՝ տեր ըլլալ ըսել է: Ծառայել՝ ազգիդ, եթէ կոռուդ ես, եթէ բանուոր ես, եթէ մեքենագետ ես, եթէ գիտուն ես»: Արական կրճատուած անուն:
- 12- Ճախարակ: Սերմ:

### Ուղղահայեաց

- 1- Թագուհի: Կատաղի:
- 2- Թատերական գործողութեան բաժանում: Առարկայ: Հակառակ՝ ծաղիկի տեսակ:
- 3- Բնակարանի մը կից պարապ տարածութիւն: Ժամանում: Եփ: Արգելական:
- 4- Միջնադարեան հայ բանաստեղծ Ֆրիկի երկերէն: Կարող:
- 5- Պարիս: Հնութիւններու մասին խօսող:
- 6- Հակառակ՝ տարածքի միաւոր: Հակառակ՝ 905: Լեզուով մը՝ այո:
- 7- Հակառակ՝ շաղկապ: Հակառակ՝ գրական գործ:
- 8- Նուշի ծառ: Հակառակ՝ Տառի մը հարեւանները:
- 9- 7001:
- 10- Չարագացած: Աղէլ:
- 11- Հետզհետէ աճող:
- 12- Ասացուածքը կ'ըսէ. «..... առաջին հասնողին ցորենը առաջինը կ'աղան»: Այն ազատամարտիկը, որուն նուիրուած է «Մռով լեռան լանջին սեւ ամպեր պատեց» երգը:

### ԽԱԶԲԱՌ (ՄՆ 483)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ա	ն	կ	ա	յ	ձ	ճ	ր	ա	գ		մ
2	ն	ն	ւ		կ				լ	ա		ա
3	ա	ս	ն	ւ	պ			յ	ա	ր	ի	ր
4	կ	տ	տ	ե	լ		զ	ա	ն	զ	ա	տ
5		ն	ւ		ն	ւ	ր	մ	ի	ա		ա
6	ա	մ	ն	ւ	ր		ր	ա	չ			կ
7	ր		տ	ն	ն	ց	ի		ա			ն
8	դ	ի		լ	ա	տ		ր	ն	ա	ր	
9			ա	լ	ւ	լ	ւ	լ		ր	ա	տ
10	պ	ա	ն	ա	կ		լ	ի				
11	է	ր	ա	ն	լ	ի	ա	ն	ա	լ		
12	ս	ա	կ	ա	ն		ա	ն	ր	ա		ն

ԼՈՒԹՈՒՄ

Երկուշաբթի  
22/4



12° 27°

Երեքշաբթի  
23/4



15° 31°

Չորեքշաբթի  
24/4



16° 34°

Հինգշաբթի  
25/4



18° 33°

Ուրբաթ  
26/4



18° 31°

Շաբաթ  
27/4



18° 32°

Կիրակի  
28/4



18° 33°



## 40 ԵՐԻՏԱՍԱՐՈՒՆԵՐ...

Սկիզբ՝ էջ 1

Սեմինարին բացումը կատարեց Բերիոյ Յայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տեր Մակար Սրբ. Արք. Ազգարեան, ներկայութեամբ Պատկան Մարմնի ներկայացուցիչներուն, «Գանձասար»-ի խմբագիրին եւ վարչութեան անդամներուն:

Սեմինարը սկսաւ սրբազան հօր «Տերունական» եւ «Չգործս Ձեռաց Մերոց» աղօթքներով:

Բացման խօսքով հանդես եկաւ «Գանձասար»-ի խմբագիր Չարմիկ Պօղիկեան, որ անդրադարձաւ մամուլի մարզին մէջ աշխատանքով, փորձառութեամբ եւ նման սեմինարներով հմտութիւն ձեռք բերելու, մտածողութիւն գարգացնելու կարեւորութեան, ինչպէս նաեւ գրելու վարժութեան եւ ներկայ ժամանակներուն տեղեկատուական դաշտին մէջ մասնագիտական մօտեցում ցուցաբերելու անհրաժեշտութեան, աւելցնելով որ նման հանդիպումներ առիթներ են նաեւ երիտասարդներու աշխարհահայեացքին ծանօթանալու եւ անոնց կարծիքը լսելու: Ապա հրաւիրեց սրբազան հայրը իր հարակաւ օրինակները տալու սեմինարի աշխատանքներուն:

Սրբազան հայրը նախ գնահատեց կազմակերպող մարմինը, ապա խրախուսեց սեմինարի մասնակիցները եւ մէջբերելով Պօղոս Առաքեալի «ժամանակը Օգտագործեցէ՛ք» խօսքը, յորդորեց ժամանակը օգտագործելով, ինքնագարգացման հետամուտ ըլլալ՝ հասնելու լաւագոյնին: Սրբազան հայրը անդրադարձաւ գիրք ընթերցելու կարեւորութեան նաեւ, վերոյիշելով վախճանեալ Գարեգին կաթողիկոսին օրինակը, որ հակառակ բազմազբաղ ըլլալուն, գիր-գրականութեան

նուիրուած ու բազում գիրքեր հրատարակած է: Սրբազանը յորդորեց մամուլ աշխատանքներուն մէջ առաջնորդուիլ ազգային արժէքներով, պատասխանատուութեան գիտակցութեամբ եւ ըլլալ յանդուգն եւ իմաստուն:

Այս առիթով սրբազան հայրը մասնակիցներուն նուիրեց «Դաւիթ Ապաշխարած Թագաւորը» գիրքէն, թարգմանութեամբ Լեւոն Վրդ. Եղիայեանի եւ «Հաւատով խոստովանիմ» աղօթքագրքովէն օրինակներ:

Սեմինարին օրակարգը կ'ընդգրկէր դասախօսութիւններ, որոնց հիմնական նպատակն էր մասնակիցներուն լրագրական գիտելիքները հարստացնել, թերթի աշխատակցութեան վարժեցնել, անոնց քննական մտածողութիւնը խթանել եւ աշխատանքային խումբակներով գործնական վարժութիւններ թելադրել:

Առաջին դասախօսութեամբ Զեսայէն Ժամանած դոկտ. Շողիկ Ազնգեան ներկայացուց «Դաշնակցական մտածողութիւնը լրատուութեան եւ հրապարակագրութեան մէջ» նիւթը: Դասախօսը վերլուծեց Դաշնակցական սերունդներու գաղափարական եւ քաղաքական ուղին, անոր արտացոլացումը մամուլին մէջ, ապա անդրադարձաւ երիտասարդ սերունդի դերին, ինչպէս նաեւ համահայկական մեր հարցերը մէկ ամբողջութեան մէջ դիտելու անհրաժեշտութեան, առանց բաժանումի սեպեր խրելու հայրութեան տարբեր հատուածներուն մէջ:

Յաջորդ դասախօսն էր Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանի հայերէնաւանդ ուսուցչուհի Սիւզի Խշուածեան, որ ներկայացուց «Լեզուական հարցեր լրագրութեան մէջ» նիւթը: Դասախօսը մասնակիցներուն օրինակներով բացատրեց լեզուական եւ քերականական կարգ մը կանոններ, որոնք անհրաժեշտ են լրագրութեան տեսակներուն, իւրաքանչիւրին մասին օրինակներ տուաւ եւ տպագիր թէ առցանց հարթակներու վրայ հարցազրոյց վարելու հիմնական սկզբունքներուն անդրադարձաւ:

Այնուհետեւ Ռաֆֆի Բեշիշեան պատկերներով, օգտագործման տոկոսներով եւ իւրաքանչիւրին ընծայած կարելիութիւններով անդրադարձաւ «Մամուլ եւ առցանց հարթակներ» նիւթին:

Ապա «Գանձասար» երիտասարդական խմբակէն Սելա Պազարպաշեան, Համազասպ Շաքարեան եւ Անի Պօղիկեան պաստառի վրայ ներկայացուցին ՅՅԳ մամուլը ընտանիքը: Համակարգչային ձեւաւորումը պատրաստած էր Նոյն խումբակէն Կիթառ Աւրեսեանը:

Իւրաքանչիւր դասախօսութեան աւարտին մասնակիցները, բաժնուած 4 խումբերու, գործնական աշխատանքներ կատարեցին ու ներկայացուցին արդիւնքը:

Երեկոյեան մասնակիցները այցելեցին Ս. Զառասնից Մանկանց Մայր եկեղեցի, ուր Տեր Չարեհ Զիւլ. Շաքարեան եկեղեցւոյ աւելի քան 550 տարուան պատմութեան ու վերանորոգութեան անդրադարձաւ:

Վերջին դասախօսն էր սուրիական պատկերասփիւռի հարդորակար, վաստակաւոր լրագրող Ֆուատ Իգմիրլի, որ նախ մասնակիցներուն հետ այցելեց եկեղեցի, մոմ վառեց ու յիշատակի խմբակար մը ունեցաւ, ապա ներկայացուց «Ապատեղեկատուութիւն եւ տեղեկատուական պատերազմ» նիւթը:

Դասախօսը լուսարձակի տակ առաւ լրագրողին յանձնառութիւնները, յատկապէս պատերազմի օրերուն, եւ պատմեց Սուրիոյ պատերազմի տարիներու իր փորձառութիւններ, մասնաւոր բախում-Նային գիծերու վրայ նկարահանման դրուագներէն:

Սեմինարի աւարտին Պօղիկեան շնորհակալութիւն յայտնեց մասնակիցներուն եւ դասախօսներուն, աւելցնելով որ նման հանդիպումներ շարունակական բնոյթ պիտի ունենան:

Ապա Պատկան Մարմնին կողմէ Ներսէս Պարսումեան իր ուրախութիւնը յայտնեց մասնակիցներու աջալուրջ մասնակցութեան, առաջարկներուն եւ գործնական աշխատանքներուն համար, շնորհակալութիւն յայտնեց դասախօսներուն եւ «Գանձասար»-ի վարչութեան, որ կազմակերպական աշխատանքները յանձն առաւ ու բժախնդրութեամբ իրագործեց:

Աւարտին մասնակիցներուն բաշխուեցան հարցաթերթիկներ, ուր անոնք իրենց կարծիքը յայտնեցին սեմինարին շուրջ եւ առաջարկներ ներկայացուցին:

Սեմինարը վերջ գտաւ երեկոյեան ժամը 8:00-ին: